211 Ուզում եմ երգել ու գովաբանել,

1. Ուզում եմ երգել ու գովաբանել,
Քո սուրբ անունը մարդկանց մեջ պատմել,
Դու, Հիսո՛ւս, սեր ես, սեր ես Դու անսպառ:
Ախ, ինչպե՞ս չասեմ՝
Սիրում եմ Քեզ,
Ախ, ինչպե՞ս չասեմ՝
Պաշտում եմ Քեզ:

2. Թեև կատարած իմ չար գործերով
Կարծես ասում եմ՝ ես ուրիշինն եմ,
Բայց սիրտս է լալիս ու թաքուն ասում՝
Ախ, Տեր, Դու գիտես,
Սիրում եմ Քեզ,
Չէ՞ որ Դու գիտես՝
Պաշտում եմ Քեզ:

3. Իմ վատ արարքով վանում եմ ես Քեզ
Ու դարձյալ զղջում. մեղավոր եմ ես,
Այո՛, Տե՛ր Հիսուս, շատ եմ մեղավոր ես:
Բայց ինչպե՞ս չասեմ՝
Սիրում եմ Քեզ,
Ախ, ինչպե՞ս չասեմ՝
Պաշտում եմ Քեզ: